Օտարերկրյա աշխատողներ և սոցիալական ապահովության համարներ

Սոցիալական ապահովության համարներն օգտագործվում են՝ պետությանը անձի աշխատավարձի մասին հաշվետվություն ներկայացնելու և անձի՝ Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու իրավասությունը որոշելու նպատակով: Ձեզ սոցիալական ապահովության համար է անհրաժեշտ՝ աշխատանք, սոցիալական ապահովության նպաստներ և պետական մի շարք ծառայություններ ստանալու համար:

Եթե Դուք գտնվում եք Միացյալ Նահանգներում ժամանակավորապես աշխատելու նպատակով, ապա Ձեր գործատուն Ձեզանից սոցիալական ապահովության համար կպահանջի: Ընդհանրապես, սոցիալական ապահովության համար կարող են ստանալ միայն Ներքին անվտանգության նախարարության (Department of Homeland Security, DHS) կողմից Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն ստացած ոչ քաղաքացիները:

Թեև բազմաթիվ այլ ձեռնարկություններ, օրինակ՝ բանկերն ու վարկային ընկերությունները, նույնպես պահանջում են համար ունենալ, սակայն Դուք պարտավորված չեք ներկայացնելու այն: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ՝ առանց սոցիալական ապահովության համարի, օրինակ՝ ձեռք բերել վարորդական իրավունք:

Ինչ պետք է անեմ՝ ԱՄՆ-ում աշխատելու համար:

Նախ պետք է ունենաք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս ԱՄՆ Ձեր ներգաղթի կարգավիճակը և ԱՄՆ-ում աշխատելու թույլտվությունը: Ապա, Դուք պետք է դիմեք Սոցիալական ապահովության վարչություն՝ սոցիալական ապահովության համար և քարտ ստանալու: Այնուամենայնիվ, մենք խորհուրդ ենք տալիս նախքան դիմելը սպասել, մինչև Միացյալ Նահանգներ Ձեր ժամանման օրից լրանա 10 օր: Այդ դեպքում Սոցիալական ապահովության վարչությունը կկարողանա ստուգել Ձեր փաստաթղթերը:

Ինչպես դիմեմ սոցիալական ապահովության համար և քարտ ստանալու:

Սոցիալական ապահովության համար և քարտ ստանալու դիմումն անվճար է: Դիմելու համար

- Լրացրեք *Սոցիալական ապահովության քարտի դիմումը* (ձև SS-5-AM) և
- Ներկայացրեք մեզ փաստաթղթեր, որոնք ապացուցում են Ձեր.
  - — ինքնությունը
  - — ներգաղթի կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ և
  - — տարիքը
- Լրացված դիմումն ու փաստաթղթերի բնօրինակները տարեք սոցիալական ապահովության Ձեր տեղական գրասենյակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կա՛մ բնօրինակ, կա՛մ տրամադրող մարմնի կողմից հաստատված պատճեններ: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի պատճեններ, այդ թվում՝ նոտարի կողմից վավերացված: Մենք չենք կարող նաև ընդունել ստացական, որը ցույց է տալիս, որ Դուք դիմել եք՝ տվյալ փաստաթուղթն ստանալու համար:

Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը երկու տարբեր նպատակներով օգտագործել: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել DHS-ից ստացած աշխատանքի Ձեր իրավունքը՝ որպես Ձեր անձը հաստատող փաստաթուղթ և որպես աշխատանքի թույլտվությամբ ներգաղթի կարգավիճակի ապացույց: Ձեր ծննդյան վկայականը կամ անձնագիրը կարող է ծառայել որպես տարիքի ապացույց: ***Դուք պետք է ներկայացնեք առնվազն երկու առանձին փաստաթուղթ:***

Ինքնությունն ու ներգաղթի կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ

Ձեր ինքնությունն ու աշխատանքի թույլտվությամբ ներգաղթի կարգավիճակն ապացուցելու համար մեզ ներկայացրեք ներկայիս ԱՄՆ ներգաղթի փաստաթղթերն ու ժամկետը չլրացած անձնագիրը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերի թվում են.

- I-551 ձևը
- I-94 ձևը (*Arrival/Departure Record* — մեկնման և ժամանման արձանագրում),որում երևում է DHS-ի աշխատանքի թույլտվությունը, կամ
- I-766 ձևը (աշխատանքի թույլտվություն՝ DHS-ից)

Փոխանակման ծրագրի շրջանակներում այցելող անձինք. J-1 այցելուն պետք է ներկայացնի DS-2019 ձևը՝ *Փոխանակման ծրագրով այցելող անձի կարգավիճակ ստանալու իրավասության վկայական* (*Certificate of Eligibility for Exchange Visitor Status*): Դրանից զատ, J-1 ուսանողները, ուսանող-պրակտիկանտներն ու միջազգային այցելուները որպես աշխատանքի ապացույց պետք է նամակ

(շրջել)

ներկայացնեն հովանավորից: Նամակը պետք է լինի հովանավորի բլանկի վրա և ունենա բնօրինակ ստորագրություն, որով Ձեզ թույլատրվում է աշխատել:

Միջազգային ուսանողներ. F-1 և M-1 ուսանողները պետք է ներկայացնեն նաև I-20 ձևը՝ *Ոչ ներգաղթային վիզա ստանալու իրավատու ուսանողի կարգավիճակին համապատասխանելու վկայական* (*Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status*): Կարող են պահանջվել աշխատանքի թույլտվությունն ապացուցող այլ փաստաթղթեր: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Միջազգային ուսանողներ և սոցիալական ապահովության համարներ* (Հրապարակում հ. 05-10181-AM) հրապարակումը:

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք Ձեր օտարերկրյա ծննդյան վկայականը, եթե այն առկա է կամ եթե այն կարող եք ձեռք բերել 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այլ դեպքում՝ մենք կարող ենք որպես Ձեր տարիքի վկայություն հաշվի առնել այլ փաստաթղթեր, օրինակ՝ Ձեր անձնագիրը կամ DHS-ի կողմից տրված փաստաթուղթը:

Որքա՞ն կտևի սոցիալական ապահովության համար ստանալը:

Նախքան Ձեզ սոցիալական ապահովության համար տալը՝ մենք պետք է ստուգենք Ձեր փաստաթղթերը DHS-ի հետ: DHS-ից հաստատում ստանալուց հետո մենք փոստով Ձեզ կուղարկենք սոցիալական ապահավության Ձեր քարտը: Որպես կանոն, փաստաթղթերի ստուգումը DHS-ի հետ կատարվում է արագ՝ առցանց ռեժիմով: Եթե Ձեր փաստաթղթերը հնարավոր չէ առցանց ստուգել, ապա DHS-ից կարող է պահանջվել մի քանի շաբաթ՝ մեր հարցմանը պատասխանելու համար: Մենք սերտորեն աշխատում ենք DHS-ի հետ՝ նվազեցնելու այդ ուշացումները:

Արդյո՞ք աշխատանքի անցնելուց առաջ ինձ համար է պետք:

Մենք չենք պահանջում նախքան աշխատանքի անցնելը սոցիալական ապահովության համար ունենալ, սակայն: Ներքին եկամուտների ծառայության պահանջով (Internal Revenue Service, IRS) աշխատողները պետք է օգտագործեն իրենց սոցիալական ապահովության համարները՝ աշխատավարձերի մասին հաշվետվություններ ներկայացնելիս:

Սոցիալական Ապահովության համարի սպասման ընթացքում, ձեր գործատէրը կարող է օգտագործել մեր կողմից տրված ստացագիրը, որում նշվում էոր դուք դիմել եք Սոցիալական Ապահովության համարի: Ձեր գործատէրը նաեւ կարող է օգտագործել ձեր ներգաղթի փաստաթղթերը որպես Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվության վկայություն:

Գործատէրերը կարող են գտնել յաւելյալ տեղեկություն համացանցի մեր կայքէջում ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm***:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10107-AM
Foreign Workers And Social Security Numbers (Armenian)
September 2011